ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված №4

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդի որոշմամբ

Արձանագրություն №18 «04» օգոստոսի 2022թ.

Խորհրդի նախագահ

Ս.Վ.Ստեփանով

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈԴԵՔՍ

(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ……...3

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ……3

ԳԼՈՒԽ 3. ԿՈԴԵՔՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ……4

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ ……4

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ….....……....6

ԳԼՈՒԽ 6. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ …….....……8

ԳԼՈՒԽ 7. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ……..…….....……..9

ԳԼՈՒԽ 8. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ …….....……..…10

ԳԼՈՒԽ 9. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՈՃ …….....……..11

ԳԼՈՒԽ 10. ԲԱՆԿ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ …….12

ԳԼՈՒԽ 11. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ……..13

ԳԼՈՒԽ 12. ՎԱՐՔԱԳԻԾԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ……...13

ԳԼՈՒԽ 13. ԲԱՆԿԻ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ….....…….....13

ԳԼՈՒԽ 14. ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ….……...14

ԳԼՈՒԽ 15. ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ ……...……14

ԳԼՈՒԽ 16. ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԿԱՆԽՈՒՄ ….....……..16

ԳԼՈՒԽ 17. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ……..16

ԳԼՈՒԽ 18. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ …….....……..17

ԳԼՈՒԽ 19. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ …..…….…….…….17

ԳԼՈՒԽ 20. ՍՈՒՅՆ ԿՈԴԵՔՍԻ ԽԱԽՏՈՒՄ …….....…….…….……18

ԳԼՈՒԽ 21. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ …….....…….……...19

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹԵՐ

1. Սույն «Կորպորատիվ էթիկայի կոդեքս»-ը (այսուհետ՝ Կոդեքս) հանդիսանում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներքին իրավական ակտ, որով սահմանվում են գործարար վարվելակերպի և էթիկայի սկզբունքները և կանոնները և որոնք պարտադիր են Բանկի բոլոր աշխատողների համար՝ անկախ նրանց զբաղեցրած պաշտոններից, այդ թվում Խորհրդի, Տնօրինության անդամների համար:

2. Կոդեքսը մշակվել է կորպորատիվ էթիկայի բնագավառում միջազգային իրավունքի նորմերի, համընդհանուր սկզբունքների, հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության, ՀՀ Կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1769-Ա որոշմամբ կիրառման համար խորհուրդ տրված ՀՀ Կորպորատիվ կառավարման կոդեքսի հիմնական էթիկական նորմերի և սկզբունքների, Հայաստանի Բանկերի Միության բանկային գործարար վարվելակերպի կանոնագրքի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում շահերի բախման կանխման և կարգավորման մասին կարգի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի գործարար վարվելակերպի կանոնների և Բանկի ներքին իրավական այլ ակտերի հիման վրա:

3. Բոլոր ներքին իրավական ակտերը, Բանկի կազմակերպա-կարգադիր, այդ թվում հաճախորդների, գործընկերների, պետական և մունիցիպալ իշխանության մարմինների, մրցակիցների և Բանկի աշխատողների հետ հարաբերությունները ձևակերպվող փաստաթղթերը մշակվում են հաշվի առնելով սույն Կոդեքսի դրույթները:

4. Տնօրինության անդամները և բոլոր աշխատողները պարտավոր են պահպանել սույն Կոդեքսի ստանդարտները, երբ գործում են Բանկի անունից՝ անկախ իրենց գտնվելու վայրից, ինչպես նաև անկախ այն հանգամանքից հանդիսանում է արդյո՞ք Բանկում աշխատանքը նրանց համար մշտական, թե համատեղության կարգով:

5. Բանկը իր գործարար պրակտիկայում հաշվի է առնում գործունեության հասարակորեն նշանակալից ասպեկտները և իր պատասխանատվությունը բաժնետերերի, հաճախորդների, գործընկերների, հասարակության և պետության հանդեպ (այսուհետ՝ շահագրգռված անձինք): Բանկը ակնկալում է, որ իր հաճախորդները, կոնտրգործակալները, գործընկերները և բաժնետերերը, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերը կիսում են սույն կանոնագրքով սահմանված էթիկայի սկզբունքները:

6. Սույն Կոդեքսի պայմանական տերն է հանդիսանում Բանկի Անձնակազմի կառավարման վարչությունը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

7. Սույն Կոդեքսում կիրառվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **Բանկ՝** «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,

2) **Տեսլական՝** ապագայի պատկեր, հիմնական կատարյալ նպատակ, որին ձգտում է Բանկը: Տեսլականը պատասխանում է այն հարցին, թե ինչպես պետք է զարգանա Բանկը իր առաքելության իրացման համար, ինչպես է պատկերացնում իրեն ապագայում,

3) **Շահերի բախում՝** հակասություն Բանկի և/կամ նրա աշխատակիցների և/կամ հաճախորդների/կոնտրգործակալների գույքային և այլ շահերի միջև, ինչը կարող է բերել անբարենպաստ հետևանքների բանկի և/կամ նրա հաճախորդների/կոնտրգործակալների համար,

4) **Կորպորատիվ էթիկա՝** աշխատանքային ժամերին և աշխատավայրից դուրս կոլեկտիվի վարվելակերպը սահմանող կանոնների ճկուն համակարգ՝ ներառող բարոյական սկզբունքներ, կոլեկտիվ արժեքներ, վարվելակերպի նորմեր,

5) **Առաքելություն՝** կազմակերպության նշանակության, նրա գոյության իմաստի որոշում,

6) **Արժեքներ՝** բոլոր աշխատակիցներին միավորող առօրյա կարգավորումներ, վարքի և գործողությունների կողմնորոշիչներ:

8. Բանկի անվերապահ արժեքը մարդու իրավունքների հարգանքը և խիստ պահպանումն է, սկզբունքների աջակցությունը հաստատված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 10.12.1948թ.), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայում» (կնքված Հռոմում 04.11.1950թ.), «Աշխատանքի ոլորտում հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին» (ընդունված Ժնևում 18.06.1982թ.) Աշխատանքի միջազգային կազմակերպության հռչակագրում, Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիայի և մարդու իրավունքների ոլորտում այլ միջազգային փաստաթղթերում:

ԳԼՈՒԽ 3. ԿՈԴԵՔՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Սույն Կոդեքսի նպատակն է Բանկի, նրա կառավարման մարմինների, աշխատողների (այսուհետ՝ ղեկավարներ և աշխատողներ) համար գործարար վարվելակերպի և էթիկայի սկզբունքների և կանոնների սահմանումը՝ ուղղված

Բանկի կապիտալացման, ֆինանսական կայունության և արդյունավետության բարձրացման:

10. Սույն Կոդեքսի խնդիրներն են.

1) Բանկի աշխատողների կողմից Բանկի հաճախորդների, գործընկերների, բաժնետերերի և կոլեգաների հանդեպ իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս անձնական պատասխանատվության գիտակցման ապահովում,
2) Բանկի և հաճախորդների, գործընկերների, պետական և մունիցիպալ իշխանության մարմինների, մրցակիցների և Բանկի աշխատողների միջև փոխհարաբերությունների հիմունքների սահմանում,
3) Բաժնետերերի, հաճախորդների, գործընկերների և Բանկի աշխատողների շահերի պաշտպանություն:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

11. Բանկի **առաքելությունը**.

Մենք օգնում ենք մարդկանց իրենց ծրագրերի իրագործման մեջ՝ ստեղծելով ֆինանսական լավագույն լուծումներ:

Մենք արհեստավարժ մասնագետների թիմ ենք՝ աշխատող մեր հաճախորդների և ամբողջ երկրի համար:

12. Բանկի **տեսլականը**.

Մենք դինամիկ և կայուն աճող ունիվերսալ ֆինանսական կազմակերպություն ենք, որը կոչված է լինելու իր հաճախորդների առաջին ընտրության գործընկեր՝ ապահովելով իրենց պահանջմունքները առավել հարմար և ժամանակակից եղանակներով:

13. Բանկի գործունեության բոլոր բնագավառների կապող օղակ և կորպորատիվ մշակույթի հիմք են հանդիսանում Բանկի Արժեքները: Արժեքները ծառայում են որոշումների և գործողությունների կատարման ամենօրյա ուղեցույց, դրանցով է որոշվում վերաբերմունքը հաճախորդների, գործընկերների և Բանկի աշխատողների նկատմամբ: Բանկի զարգացմանը զուգընթաց և շուկային փոփոխվող պահանջների ուժով Արժեքները կարող են ճշտվել և լրացվել:

14. Բանկի **Արժեքներն** են.

1) **Մենք գնահատում ենք հաճախորդին**.

a. Մենք կարևորում ենք հաճախորդի կարիքները,
b. Մենք վստահում ենք հաճախորդին և ձգտում ենք վաստակել նրա վստահությունը,

c. Մենք լսում և հասկանում ենք հաճախորդին:

2) **Մենք աշխատում ենք թիմում.**

a. Մենք հարգում և վստահում ենք միմյանց,
b. Մենք աջակցում ենք միմյանց և օգնում կոլեգաներին աճել,
c. Մենք հետապնդում ենք ընդհանուր նպատակներ:

3) **Մենք պատասխանատու ենք արդյունքի համար**

a. Մենք կենտրոնացած ենք արդյունքի, ոչ թե գործընթացի վրա,
b. Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու է ընդհանուր նպատակների իրականացման գործում իր ներդրման համար,
c. Մենք բացահայտ խոսում ենք հաջողությունների և ձախողումների մասին:

4) **Մենք նախաձեռնություն ենք ցուցաբերում.**

a. Մենք անտարբեր չենք գործի նկատմամբ,
b. Մենք պրոակտիվ դիրքորոշում են զբաղեցնում ընդհանուր խնդիրները լուծելիս,
c. Մենք ավելին ենք անում, քան պարտավոր ենք անել:

5) **Մշտապես կատարելագործվում ենք.**

a. Մենք պատրաստ ենք ցանկացած փոփոխության,
b. Մենք սկսում ենք ինքներս մեզնից,
c. Մենք չենք վախենում փորձել:

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

15. Շահերի բախումը իրենից ներկայացնում է հակասություն Բանկի և/կամ նրա աշխատակիցների և/կամ հաճախորդների/կոնտրգործակալների գույքային և այլ շահերի միջև, ինչը կարող է բերել անբարենպաստ հետևանքների բանկի և/կամ նրա հաճախորդների/կոնտրգործակալների համար,

16. Շահերի բախման պոտենցիալ կողմերն են Բանկը, Բանկի աշխատակիցները, հաճախորդները և կոնտրգործակալները:

17. Բանկը խորհուրդ է տալիս Խորհրդի, Տնօրինության և այլ կոլեգիալ մարմինների (հանձնաժողովների, կոմիտեների) անդամներին ձեռնպահ մնալ վերը նշված կոլեգիալ մարմինների նիստերին քվեարկելուց օրակարգի համապատասխան հարցերով և հեռակա կարգով քվեարկությունից այն դեպքերում, երբ նրանց մոտ առկա է անուղղակի կամ ուղղակի շահ որոշման ընդունման մեջ:

18. Բանկը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները և իրականացնում բոլոր անհրաժեշտ միջոցառումները Բանկում առաջացող շահերի բախումների կանխման և կարգավորման (վերացման) ուղղությամբ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների համապատասխան:

19. Շահերի բախման կանխման նպատակով Բանկի աշխատողները պետք է պահպանեն հետևյալ սկզբունքները.

    1) խուսափել այնպիսի գործողություններ կատարելուց և որոշումներ ընդունելուց, որոնք կարող են բերել շահերի բախման,

    2) խուսափել շահերի բախման առաջացումից, ինչպես նաև այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են դիտարկվել որպես շահերի բախում,

    3) պահպանել մասնագիտական էթիկայի սկզբունքները, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները,

    4) չօգտագործել իր պարտականությունների կատարման արդյունքում ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի ռեսուրսները իր սեփական շահերի համար:

20. Շահերի բախումից խուսափելու համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանվել են Բանկում շահերի բախման առաջացման հնարավոր դեպքերը, շահերի բախման առաջացման կանխման միջոցները, որոնք պետք է պահպանեն Բանկի բոլոր աշխատողները:

21. Բանկը խորհուրդ է տալիս աշխատողներին նախապես և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով անհրաժեշտ միջոցներ կիրառել շահերի բախման կանխման և կարգավորման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնել շահերի բախման կառավարման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանմանը Բանկում շահերի բախման պոտենցիալ կամ առկա դեպքերի մասին:

22. Շահերի բախման առաջացման ռիսկերի նվազեցման նպատակով թույլ չի տրվում ընդունել աշխատանքի միևնույն տարածքային կամ կառուցվածքային ստորաբաժանումում ազգակցական կապի մեջ գտնվող աշխատակիցներին (մայր, հայր, ամուսին, կին, երեխաներ, հարազատ քույրեր/եղբայրներ/քրոջ և եղբոր երեխաներ, հոր/մոր քույրեր/եղբայրներ, ամուսնու/կնոջ ծնողներ):

23. Գլխավոր տնօրենի-Տնօրինության նախագահի, Գլխավոր տնօրենի-Տնօրինության նախագահի տեղակալի, Դեպարտամենտների Տնօրենների, Գլխավոր հաշվապահի պաշտոնները փոխարինող Բանկի աշխատողները չեն կարող իրականացնել աշխատանքային գործունեություն Բանկի աշխատողի հետ մոտիկ ազգակցական

կապի մեջ գտնվելու (ծնողներ. ամուսիններ, երեխաներ, եղբայրներ, քույրեր, ինչպես նաև ամուսինների եղբայրներ, քույրեր, ծնողներ և երեխաների ամուսիններ) դեպքում, եթե աշխատանքային գործունեության իրականացումը կապված է միմյանց անմիջական ենթակայությամբ կամ ենթահսկողությամբ:

24. Բանկը ըմբռնմամբ է մոտենում աշխատողների մասնակցությանը հասարակական, մանկավարժական, գիտահետազոտական և ձեռնարկատիրական գործունեությունում՝ Բանկի վրա տվյալ գործունեության բացասական ազդեցության բացակայության պայմանով, ինչպես նաև աշխատողի կողմից իր պաշտոնական պարտականությունների վրա անմիջական բացասական ազդեցության բացակայության պայմանով:

25. Աշխատողները պարտավոր են ժամանակին տեղեկացնել Բանկին՝ Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան, պոտենցիալ և/կամ գոյություն ունեցող շահերի բախման դեպքերի մասին, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության առկայության մասին, որը կարող է ուղղակի կամ անուղղակի ձևով բերել շահերի բախման առաջացման:

26. Շահերի բախման կառավարումն իրականացվում է Բանկում շահերի բախման կանխման և կարգավորման ներքին իրավական ակտերի համաձայն:

ԳԼՈՒԽ 6. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

27. Բանկի հարաբերությունները բաժնետերերի, հաճախորդների, ներդրողների, վարկատուների, գործընկերների և պետական և մունիցիպալ իշխանության մարմինների ներկայացուցիչների հետ կառուցվում են բարեխղճության, ազնվության, պրոֆեսիոնալիզմի, փոխադարձ վստահության և հարգանքի, հաճախորդի շահերի նախապատվության, պարտավորությունների անքակտելիության, կիրառելի օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվության բացահայտման լրիվության, դատաքննության հանդեպ բանակցությունների նախապատվության սկզբունքներով: Հաճախորդների նկատմամբ Բանկի վարվելակերպի կանոնները սահմանվում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ գործարար վարվելակերպի կանոններ»-ով և հասանելի են Բանկի պաշտոնական կայքում: Բանկը ձգտում է օգտագործել բոլոր հասանելի հաղորդակցման ուղիները (տեղեկացման մեթոդները). մամլո-կոնֆերանսներ, գործարար հանդիպումներ, տպագրական միջոցներ, հեռահաղորդակցություն, ինչպես նաև Համացանցը Բանկի մասին բացահայտվող տեղեկատվությանը բոլոր շահագրգռված անձանց ազատ հասանելիության ապահովման համար:

28. Բանկի աշխատողները պարտավոր են գործադրել բոլոր ջանքերը Բանկի հաճախորդի և/կամ գործընկերոջ իրավունքների ոտնահարման իրավիճակների առաջացման ցանկացած ռիսկերի նվազեցման համար: Ընդ որում հաճախորդի և/կամ գործընկերոջ իրավունքների ոտնահարման իրավիճակների առաջացման ռիսկերի նվազեցումը չպետք է հանգեցնի որևէ ռիսկերի առաջացմանը Բանկի համար:

29. Բանկը ձգտում է օգտագործել իր փորձը և լավագույն համաշխարհային պրակտիկաները նոր պրոդուկտների մշակման և ֆինանսական շուկա դրանց ներդրման համար: Զարգանալով և ստանալով նոր գիտելիքներ, Բանկը զգալի առավելություններ է առաջարկում իր հաճախորդներին՝ նպաստելով իրենց բիզնեսի աճին:

30. Բանկը ձգտում է գործընթացների և ընթացակարգերի առավելագույն արդյունավետության: Խնդիրների ճշգրիտ ձևավորում, դրա լուծման համար անհրաժեշտ գործիքների ճիշտ ընտրություն, ռեսուրսների գրագետ օգտագործում՝ սրանք են հիմնական մեթոդները, որոնց շնորհիվ Բանկը հասնում է ամենաբարձր արդյունքի:

31. Բանկը ձգտում է պայմանագրային պարտավորությունների կատարմանը և գնահատում է գործարար հարաբերությունները:

32. Բանկը բանակցություններ է վարում փոխադարձ հարգանքի սկզբունքների և փոխշահավետ պայմաններով պայմանագրերի կնքման շուրջ: Գործարար հարաբերությունների կառուցման ընթացքում Բանկը ձգտում է մատուցել որակյալ ծառայություններ բարձր մասնագիտական մակարդակով: Վեճի դեպքում Բանկը ձգտում է մշակել փոխադարձ կիրառելի և արդար որոշում:

33. Բանկը ձգտում է անշեղորեն պահպանել միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքները և ՀՀ Օրենսդրության, սույն Կոդեքսի, այլ ներքին իրավական ակտերի նորմերը: Բանկը պատասխանատվություն է կրում բաժնետերերի հանդեպ իր գործունեության արդյունքների համար, հաճախորդների հանդեպ՝ բանկային ծառայությունների որակի համար, գործընկերների հանդեպ՝ իր պարտավորությունների պատշաճ կատարման համար, հասարակության և պետության հանդեպ՝ անձի, նրա իրավունքների և ազատությունների հանդեպ հարգանքի, ՀՀ տնտեսության զարգացման գործում ներդրման համար:

34. Բանկը ձգտում է անշեղորեն պահպանել հանցավոր ճանապարհով ստացած եկամուտների օրինականացման հակազդելու հետ կապված ՀՀ օրենսդրությունը և վարել գործերը հուսալի հաճախորդների, կոնտրգործակալների հետ, որոնք

զբաղվում են օրինական գործունեությամբ և ստանում եկամուտներ միայն օրինական աղբյուրներից:

35. Բանկը ուշադիր քննարկում և ժամանակին արձագանքում է բաժնետերերի, հաճախորդների, գործընկերների, պետական և մունիցիպալ իշխանության մարմինների ներկայացուցիչների կողմից Բանկի հասցեին ներկայացված դիտողություններին, բողոքներին և պահանջներին:

ԳԼՈՒԽ 7. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

36. Բանկը կառուցում է իր փոխհարաբերությունները մրցակիցների հետ ազնվության և փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա: Բանկը դիտարկում է մրցակիցներին որպես իր զարգացման լրացուցիչ խթան:

37. Բանկը կառուցում է իր փոխհարաբերությունները մրցակիցների հետ ՀՀ օրենսդրության հիման վրա՝ հաշվի առնելով բիզնեսի վարման նորմերը և գործարար վարվելակերպի կանոնները: Բանկը կտրականապես մերժում է անարդար մրցակցությունը և կատարում է բոլոր կիրառելի հակամենաշնորհային օրենսդրության պահանջները:

38. Մրցակիցների հետ տարաձայնությունների և վեճերի առաջացման դեպքում Բանկը նախապատվություն է տալիս բանակցություններին և փոխզիջողությանը:

ԳԼՈՒԽ 8. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ

39. Բանկը կառուցում է իր փոխհարաբերությունները աշխատողների հետ երկարաժամկետ համագործակցության, փոխադարձ հարգանքի և փոխադարձ պարտավորությունների անշեղ կատարման սկզբունքների հիման վրա:

40. Բանկը թույլ չի տալիս աշխատակիցների նկատմամբ խտրականության որևէ դրսևորում, ներկայացնում է հավասար հնարավորություններ բոլոր աշխատողների համար՝ անկախ նրանց քաղաքական և կրոնական հայացքներից, ազգային, էթնիկ պատկանելությունից, սեռից, տարիքից, առողջության կամ հաշմանդամության սահմանափակումներից և այլ բաներից՝ աշխատանքի, վարձատրության, առաջխաղացման հարցում:

41. Բանկը միշտ հարգալից է վերաբերվում իր աշխատողներին, ընդ որում թույլ չի տալիս աշխատանքի ընդունելիս և աշխատանքի առաջխաղացման դեպքում, ինչպես նաև նյութական խրախուսում տրամադրելիս չհիմնավորված արտոնությունների և առավելությունների ցուցաբերում:

42. Բանկը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ աշխատողների մասնագիտական աճի, սոցիալ բարեկեցության համար: Բանկը ճանաչում և աջակցում է աշխատողների ազատությունը՝ պրոֆեսիոնալ միություններում և ասոցիացիաներում միավորմանը,

կոլեկտիվ բանակցությունների անցկացմանը:

43. Բանկը դիտարկում է իր աշխատանքային կոլեկտիվին որպես իր երկարաժամկետ և կայուն զարգացման կարևոր գրավական: Դրա հետ կապված Բանկն ապահովում է ոչ միայն օրենսդրությամբ նախատեսված աշխատողների առողջության պահպանման ուղղված միջոցառումների անցկացում, այլ իրականացնում է մի շարք լրացուցիչ սոցիալական ծրագրեր այդ բնագավառում, այդ թվում՝ աշխատողներին նյութական օգնություն և լրացուցիչ բժշկական ապահովագրություն:

44. Բանկը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներ Բանկի հանդեպ երրորդ անձանց կողմից անիրավական գործողությունների կանխման ուղղությամբ, մեծ ուշադրություն է հատկացնում իր աշխատողների աշխատանքի արդյունավետությունը և անվտանգությունը ապահովող պայմանների ստեղծմանը, այդ թվում՝ առաջնորդվելով Աշխատանքի միջազգային կազմակերպության1 հիմնական հռչակագրերի, կոնվենցիաների և առաջարկությունների սկզբունքներով, որևէ կերպ չի թույլատրում հարկադիր կամ մանկական աշխատուժի կիրառումը:

45. Աշխատողները պետք է թույլ չտան այնպիսի իրավիճակների առաջացում, որոնք կարող են հանգեցնել Բանկի գործարար հեղինակությանը, այլ ոչ նյութական և նյութական շահերին վնաս հասցնելուն:

46. Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարման մշակույթի զարգացում: Իրենց պարտականությունները կատարելիս աշխատակիցները պետք է հատուկ ուշադրություն ցուցաբերեն հնարավոր ռիսկերի նկատմամբ, որոնք կարող են հանգեցնել Բանկի համար կորուստների առաջացման, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով տեղեկացնել Բանկի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը (կախված ռիսկերի տեսակից) այդպիսի ռիսկերի առկայության մասին:

47. Աշխատողի վարքագիծը չպետք է նվազեցնի հասարակության վստահությունը Բանկի հանդեպ, կամ սպառնալ նրա ծառայողական պարտականությունների կատարման հնարավորությանը:

1 Այդ թվում՝ 18.06.1998թ.«Աշխատանքի ոլորտում հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին» (ընդունված 18.06.1998թ. Ժնևում) Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) հռչակագրրով, «Բազմազգ կորպորացիաների և սոցիալական քաղաքականության վերաբերյալ սկզբունքների եռակողմ հռչակագրով» (ընդունված Ժնևում 16.11.1977թ. ԱՄԿ Վարչական խորհուրդի 204-րդ նիստում, հետագա լրացումներով), 20.06.1981թ. N155 ԱՄԿ կոնվենցիայով «Աշխատանքի անվտանգության և հիգիենայի և աշխատանքային միջավայրի մասին» (ընդունված Ժնևում 22.06.1981թ. ԱՄԿ Գլխավոր կոնֆերանսի 67-րդ նիստում), 20.06.1988թ. N167 ԱՄԿ կոնվենցիայով «Շինարարական աշխատանքների անվտանգության և հիգիենայի մասին» (կնքված Ժնևում

20.06.1988թ.), 15.06.2006թ. N187 ԱՄԿ կոնվենցիայով «Աշխատանքի անվտանգությանը և հիգիենային նպաստող հիմունքների մասին» (կնքված Ժնևում 15.06.2006 թ.):

48. Աշխատողները ՀՀ օրենսդրության դրույթներին, սույն Կոդեքսին, Բանկի ներքին իրավական ակտին համապատասխան պարտավոր են պահպանել ծառայողական տեղեկատվությունը, չհրապարակել և այլ կերպ չտարածել տարածման ոչ ենթակա ծառայողական տեղեկատվությունը Բանկի, հաճախորդների մասին, ինչպես նաև չօգտագործել ծառայողական տեղեկատվությունը անձնական նպատակներով և իր փոխկապակցված անձանց շահերից ելնելով, բացառությամբ դեպքերի, երբ այդ տեղեկատվության հրապարակումը կիրառելի օրենսդրության պահանջների ուժով ուղղակի թույլատրված կամ պարտադիր է:

ԳԼՈՒԽ 9. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՈՃ

49. Բանկը դիտարկում է իմիջը որպես կարևոր գործիք իր առջև դրված նպատակներին հասնելու և խնդիրները իրացնելու գործում: Այսպիսով բոլոր աշխատողների կարևորագույն մասնագիտական պարտականություններից մեկը, անկախ զբաղեցրած պաշտոնից, հանդիսանում է կորպորատիվ մշակույթի պահանջների և աշխատողի իմիջի պահպանման ուղղությամբ ամենօրյա աշխատանքը:

50. Բանկի ղեկավարները և աշխատողները պարտավոր են հարգել, անհրաժեշտության դեպքում հարցնել կոլեգաների մասնագիտական կարծիքը, վերջինների իրավասության սահմաններում, և գնահատել նրանց ներդրումը Բանկի գործունեության մեջ:

51. Բանկի ղեկավարները (այդ թվում կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարները) պարտավոր են լինել արդար իրենց ենթակաների հետ, ներգրավել նրանց իրենց իրավասության շրջանակներում որոշումների ընդունման գործընթացում, չխոչընդոտել նրանց կողմից իրենց իրավասությանը վերաբերվող հարցերով սեփական դիրքորոշման ներկայացմանը, և տրամադրել հավասար հնարավորություններ նրանց գիտելիքների և հմտությունների զարգացման գործում:

52. Կոլեգաների հետ շփվելիս աշխատողները պարտավոր են ցուցաբերել քաղաքավարություն, չբարձրացնել ձայնը աշխատանքային վայրում, չխոչընդոտել այլ անձանց իչենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, խնայել սեփական և իրենց կոլեգաների ժամանակը:

53. Աշխատողը պարտավոր է ձգտել կոլեգաների հետ արդյունավետ համագործակցության սահմանման, առավելագույնս աջակցել նրանց առջև դրված խնդիրների լուծմանը:

54. Աշխատողը պարտավոր է քննադատել կոլեգային միայն վերջինի ներկայությամբ՝ ներկայացնելով/ճշտելով բոլոր հիմքերը:

55. Բանկում արգելվում է այլ աշխատողների մասին բամբասանքը, զրպարտանքը և վարկաբեկումը: Աշխատողն իրավունք չունի քննարկել իր կոլեգաների վարքագիծը, համոզմունքները և ոճը այդ առումով չլիազորված անձանց հետ:

56. Աշխատողը, անկախ հաղորդակցման մակարդակից, տեսակից և եղանակից, պետք է ձգտի լինել քաղաքակիրթ, բարեհամբյուր, գթալիր, ցուցաբերել հանդուրժողականություն հաճախորդների և գործընկերների կողմից իր հետ ոչ կոռեկտ հաղորդակցման փաստերի նկատմամբ:

57. Աշխատողը պետք է պահպանի աշխատանքային կարգապահության կանոններ: Այն դեպքերում, երբ հանգամանքները կարող են հանգեցնել կարգապահության խախտման, աշխատողը պարտավոր է տեղյակ պահել այդ մասին իր անմիջական ղեկավարին: Ընդ որում աշխատողը պետք է ձգտի հնարավորինս նվազեցնի այդպիսի հանգամանքների առաջացումը:

58. Աշխատողներին խորհուրդ է տրվում պահպանել աշխատանքային ոճը հագուստում, որը կհամապատասխանի Բանկի կողմից որդեգրած իմիջին և որը սահմանվում է աշխատողների արտաքին տեսքին ներկայացվող պահանջներ սահմանող փաստաթղթով:

ԳԼՈՒԽ 10. ԲԱՆԿ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

59. Բանկը դիտարկում է իրեն որպես հասարակական միջավայրի անբաժանելի տարր, որտեղ նա աշխատում է և որի հետ նա ձգտում է կարգավորել ամուր հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ հարգանքի, վստահության, ազնվության և արդարության սկզբունքների վրա:

60. Կարևորագույն խնդիրներից մեկը Բանկը համարում է բնապահպանության խնդիրը: Բանկը ձգտում է խնայողաբար վերաբերվել շրջակա միջավայրին, այդ թվում ռեսուրսների (էլեկտրաէներգիա, թուղթ, վառելիք և այլն) խնայողական սպառման միջոցով՝ հաշվի առնելով կիրառելի ստանդարտները և միջազգային սկզբունքները շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

61. Բանկը որոշում է ՀՀ բնակչության աջակցության առաջնային ուղղությունները՝ ընդունված ռազմավարությանը և հնարավորություններին, ազգային նախապատվություններին և տեղական առանձնահատկություններին համապատասխան, մասնակցում է և աջակցում է սոցիալական և բարեգործական նախագծերի:

ԳԼՈՒԽ 11. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

62. Բանկը քաղաքականապես չեզոք է. նա չի մասնակցում/սատարում քաղաքական շարժումներին, կուսակցություններին և/կամ քաղաքական թեկնածուներին, բանկային գործունեություն իրականացնելիս չի առաջնորդվում քաղաքական նկատառումներով:
63. Բանկի աշխատակիցները կարող են զբաղվել քաղաքական գործունեությամբ միայն աշխատանքային ժամերից հետո և աշխատանքային պարտականությունների կատարումից դուրս: Այդպիսի դեպքերում նրանք պետք է հանդես գան ոչ որպես Բանկի աշխատակից՝ չօգտագործելով Բանկում ունեցած իրենց դիրքը կամ հանդես գալ Բանկի անունից, ինչպես նաև Բանկի հետ նույնականացվող որևէ տարր՝ քաղաքական գործունեություն ծավալելու համար:
64. Բանկի աշխատակիցները կարող են օժանդակել ցանկացած քաղաքական կուսակցության կամ թեկնածուի, եթե իրենք հանդես են գալիս ոչ որպես Բանկի ներկայացուցիչ և/կամ չեն գործում Բանկի անունից:
65. Բանկի աշխատակիցները քաղաքական դաշտում չեն կարող որևէ պաշտոն զբաղեցնել կամ ծավալել քաղաքական գործունեություն առանց Բանկի գործադիր մարմնին նախապես տեղեկացնելու:

ԳԼՈՒԽ 12. ՎԱՐՔԱԳԻԾԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ

66. Բանկի աշխատողների վարքագիծը սոցիալական ցանցերում պետք է համապատասխանի սույն Կոդեքսով և Բանկի ներքին այլ իրավական ակտերով սահմանված գործարար վարվելակերպի և էթիկայի սկզբունքներին և կանոններին:

67. Սոցիալական ցանցերից օգտվելիս Բանկի աշխատողներին խորհուրդ է տրվում.

    1) գրանցվել իր սեփական անվամբ;

    2) տեղադրել տեղեկատվություն համապատասխանող Բանկի աշխատողի իմիջին, սահմանված սույ Կոդեքսով և Բանկի ներքին այլ իրավական ակտերով,

    3) տեղադրել լուսանկարներ կոլեգաների հետ միայն նրանց համաձայնությամբ,

4) չքննարկել բանկի գործունեությունը, չտրամադրել պաշտոնական պատասխաններ Բանկի անունից՝ օգտվելով ծառայողական տեղեկատվությունից,

5) բաժանորդագրվել Բանկի էջերին սոցիալական ցանցերում (Facebook, Telegram, Linkedin, Instagram),

6) ցանկության դեպքում նպաստել Բանկի, նրա պրոդուկտների և ծառայությունների առաջխաղացմանը, կիսվելով սոցիալական ցանցերում Բանկի պաշտոնական էջերում ներկայացված պաշտոնական տեղեկատվությամբ և տեսահոլովակներով:

ԳԼՈՒԽ 13. ԲԱՆԿԻ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

68. Բանկի աշխատողներին անհրաժեշտ է խելամտորեն և արդյունավետ օգտագործել Բանկի գույքը, կանխել ոչ իր նպատակին համապատասխան նրա օգտագործումը կամ կորուստը: Բանկի գույքը նախատեսված է աշխատողներին նրանց ծառայողական նպատակներին հասնելու գործում օգնության համար:

69. Բանկի գույքի պաշտպանության և պատշաճ օգտագործման նպատակով աշխատողներին խորհուրդ է տրվում.

1) ցուցաբերել խելամիտ զգուշություն գողություն, կորուստ կամ ոչ պատշաճ օգտագործում չթույլատրելու նպատակով,

2) անմիջապես հայտնել իր անմիջական ղեկավարին Բանկի գույքի փաստացի կամ նախատեսվող գողության, կորստի կամ ոչ պատշաճ օգտագործման մասին,

3) պաշտպանել համակարգչային համակարգերը, տվյալների հենքերը, կապի միջոցները և գրավոր նյութերը երրորդ անձանց ոչ դիտավորյալ և անիրավաչափ ոտնձգությունից,

4) օգտագործել Բանկի գույքը, ինչպես նաև ծրագրային պրոդուկտները և հաղորդակցման ցանցերը միայն օրինական բիզնես նպատակներով կատարվող պաշտոնական պարտականությունների շրջանակներում:

ԳԼՈՒԽ 14. ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

70. Հաշվապահական հաշվառման և հաշվետվության մեջ արտացոլվող լրիվ, ճիշտ և հավաստի տվյալները հանդիսանում են Բանկի արդյունավետ և թափանցիկ գործունեության առանցքային բաղադրիչներ: Դրանք Բանկի գործունեության

ընթացքում ընդունվող ռազմավարական և բիզնես որոշումների համար հիմնական աղբյուրն են:

71. Բանկի աշխատողները՝ իրենց վերապահված պաշտոնական պարտականությունների շրջանակներում, պարտավոր են ազնիվ, ճշգրիտ, ժամանակին և լրիվ ծավալով վարել գրառումներ և կազմել հաշվետվություններ Բանկի գործունեության վերաբերյալ: Հաշվետվության ոչ ճիշտ, թերի և ոչ ժամանակին տրամադրումը շահագրգռված անձանց անթույլատրելի է:

72. Հաշվապահական հաշվառման, ինչպես նաև հաշվետվության վարման սկզբունքների խախտման, այդ թվում դրամական միջոցները վատնելու և Բանկի չհաշվառված գույքի մասին տեղեկություններ ունեցող աշխատողը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին իր անմիջական ղեկավարին և Ներքին աուդիտի դեպարտամենտին:

ԳԼՈՒԽ 15. ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ

73. Բանկը կորպորատիվ մշակույթի կատարելագործման նպատակով հետևում է բաց և ազնիվ բիզնեսի վարման բարձր էթիկական ստանդարտներին, հետամուտ է լինում կորպորատիվ կառավարման և Բանկի անբիծ գործարար հեղինակության պահպանման լավագույն պրակտիկաներին:

74. Բանկում գործում է Հակակոռուպցիոն քաղաքականություն, որով սահմանվում է Բանկի հակակոռուպցիոն գործունեության իրագործման կարգը, ինչպես նաև Բանկի աշխատողների պարտականությունները կոռուպցիայի կանխարգելման, այդ թվում կոռուպցիայի պատճառների բացահայտման և հետագա վերացման գործում (կոռուպցիայի կանխարգելում):

75. Բանկի աշխատողները պարտավոր են պահպանել ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրության, Բանկի Հակակոռուպցիոն քաղաքականության, ինչպես նաև սույն Կոդեքսի պահանջները: Բանկի աշխատողները անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից պատասխանատվություն են կրում Բանկի սույն Հակակոռուպցիոն քաղաքականության սկզբունքների և պահանջների չպահպանման համար:

76. Բանկի աշխատողը պետք է հրաժարվի հովանավորական ուղևորություններից և թանկարժեք նվերներից համ հյուրասիրություններից՝ կապված իր զբաղեցրած պաշտոնի կամ ծառայողական պարտականությունների հետ: Բանկի աշխատողը կարող է ստանալ համեստ նվերներ կամ հյուրասիրություններ, եթե դա կապված է նորմալ աշխատանքային գործունեության հետ (օրինակ՝ Բանկի անունից կազմակերպված շնորհանդեսների, սեմինարների ընթացքում): Աշխատողը պետք է

ներկայացնի գրավոր հաշվետվություն իր ղեկավարին և Անձնակազմի կառավարման վարչության պետին տասը հազար դրամը գերազանցող նվերների մասին:

77. Բանկի աշխատողներին արգելվում է ուղղակի կամ անուղղակի, անձամբ կամ երրորդ անձանց միջոցով մասնակցել կոռուպցիոն գործողություններին, առաջարկել և ստանալ կաշառքներ, չարաշահել լիազորությունները, իրականացնել առևտրային կաշառում վարչական և այլ ընթացակարգերը հեշտացնելու նպատակով, կամ իր կամ երրորդ անձանց համար փողի, արժեքների, այլ գույքի կամ գույքային բնույթի ծառայությունների տեսքով եկամուտ, այլ գույքային իրավունքներ ստանալու նպատակով:

78. Բանկի աշխատողներին արգելվում է ստանալ պարգևատրումներ Բանկից դուրս իրականացված գործունեության համար (ներառյալ ելույթների, խորհրդատվությունների կամ շնորհանդեսների դիմաց), որոնք առաջարկվել են կապված Բանկում աշխատողի զբաղեցրած պաշտոնի հետ: Այն դեպքում, եթե հրաժարումը պարգևատրումից կարող է հանդիսանալ պարգևատրում առաջարկողի տարակուսանքի պատճառ, այդ գումարը պետք է փոխանցվի Բանկ (սույն կետում նշված սահմանափակումները կարող են կիրառվել այն դեպքում, երբ Բանկի աշխատողը ելույթ է ունենում որևէ հասարակական միջոցառման ընթացքում կամ ներկայացնում է Բանկը):

79. Բանկի անունից տրամադրվող նվերները և ներկայացուցչական ծախսերը, կամ Բանկի ղեկավարների/աշխատողների կողմից այլ անձանցից և կազմակերպություններից իրենց պաշտոնական պարտականությունների կատարման դիմաց ստացվող նվերները պետք է համապատասխանեն գոյություն ունեցող գործնական շրջանառության և ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:

80. Բանկի աշխատողների մոտ հակակոռուպցիոն գիտակցության և մշակույթի պատշաճ մակարդակի ձևավորման համար Բանկում անց է կացվում աշխատողների պարբերական ուսուցում՝ նրանց կոռուպցիայի հետ կապված ռիսկերի և դրանց հետևանքների պարզաբանման նպատակով:

81. Բանկի աշխատակիցները պարտավոր են առաջնորդվել Բանկի հակակոռուպցիոն քաղաքականության սկզբունքներով և ընթացակարգերով:

ԳԼՈՒԽ 16. ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԿԱՆԽՈՒՄ

82. Բանկն իրականացնում է գործունեություն ինսայդերական տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման և (կամ) շուկան մանիպուլյացիայի ենթարկման կանխման, բացահայտման և ճնշման ուղղությամբ:

83. Բանկի աշխատողները, իրենց լիազորությունների սահմաններում, պարտավոր են ձեռնարկել իրենցից կախված բոլոր միջոցները ինսայդերական տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման և տարածման պաշտպանության և չթույլատրման գծով:

84. Բանկի այն աշխատողն, որին հայտնի է դարձել ինսայդերական տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման և (կամ) շուկան մանիպուլյացիայի ենթարկման մասին, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին իր անմիջական ղեկավարին, Բանկի համապատասխան ստորաբաժանմանը: Բանկի ղեկավարները և աշխատողները, ՀՀ օրենսդրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով, տեղեկացնում են Բանկի համապատասխան ստորաբաժանմանը նրանց պատկանող Բանկի արժեթղթերի և արժեթղթերով իրականացված գործարքների մասին, որոնցում նրանք հանդես են գալիս որպես կողմ, շահառու, միջնորդ կամ ներկայացուցիչ:

ԳԼՈՒԽ 17. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

85. Բանկն ապահովում է իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը ՀՀ օրենսդրությանը և միջազգային ստանդարտներին համապատասխան՝ հավաստիության, կանոնավորության, նրա ներկայացուցչության օպերատիվության, Բանկի թափանցիկության և նրա առևտրային շահերի պահպանման միջև հավասարակշռության սկզբունքներից ելնելով:

86. Հաճախորդներին և գործընկերներին տրամադրվող տեղեկատվության ծավալն որոշվում է նրանց տրամադրվող ծառայությունների բնույթով՝ ՀՀ օրենսդրությանը, սույն Կոդեքսի և Բանկի այլ ներքին իրավական ակտերին համապատասխան:

87. Բանկի ղեկավարների և աշխատողների կողմից Բանկի գործունեության մասին տեղեկատվության տարածումը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին իրականացվում է կիրառվող ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 18. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

88. Յուրաքանչյուր ղեկավարը/աշխատողը պետք է պահպանի ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները, որոնց շրջանակներում նա իրականացնում է լիազորություններ կամ կատարում պաշտոնական պարտականություններ:

89. ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների խախտումը կրում է կարգավորող (կոմպլաենս) և այլ ռիսկեր Բանկի համար, նպաստում է Բանկի գործունեության արդյունավետության նվազմանը և վնասների առաջացմանը, որը ուղղակիորեն կարտացոլվի նրա բոլոր աշխատողների բարեկեցության վրա:

90. Բանկի ղեկավարները և աշխատողները ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները չպահպանելու համար:

ԳԼՈՒԽ 19. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

91. Աշխատողների կողմից որոշումներ ընդունելիս խորհուրդ է տրվում գործել ամբողջ պատասխանատվությամբ և քննարկել ծագող էթիկական խնդիրները նրանց անմիջական ղեկավարների հետ: Եթե քննարկման արդյունքում ընդունելի լուծում չի գտնվի, ապա համապատասխան խնդրի վերաբերյալ աշխատողը կարող է տեղեկացնել Անձնակազմի վարչությունը պարզաբանումներ ստանալու նպատակով, իսկ ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ Վերահսկողական ծառայությանը (կոմպլաենս):

92. Բոլոր աշխատողներն իրավունք ունեն խորհրդակցելու անմիջապես Անձնակազմի վարչության էթիկայի հարցերով պատասխանատու ներկայացուցչի հետ: Նշված ներկայացուցիչները տրամադրում են ՀՀ օրենսդրության, սույն Կոդեքսի և Բանկի այլ ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանող խորհուրդներ:

ԳԼՈՒԽ 20. ՍՈՒՅՆ ԿՈԴԵՔՍԻ ԽԱԽՏՈՒՄ

93. Բանկի ղեկավարների և աշխատողների կողմից անօրինական, ինչպես նաև սույն Կոդեքսի դրույթները խախտող գործողությունների կատարման դեպքում, Բանկի

նկատմամբ կարող են կիրառվել կարգավորող և վերահսկող մարմինների ազդեցության միջոցները:

94. Սույն Կոդեքսի դրույթների խախտման դեպքում, Բանկի աշխատողի նկատմամբ կկիրառվեն պատասխանատվության վարչական միջոցներ՝ ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան:

95. Բանկի ղեկավարների և աշխատողների բոլոր հարցերը և հաղորդագրությունները ՀՀ օրենսդրության կամ սույն Կոդեքսի իրենց հայտնի կամ ենթադրվող խախտումների վերաբերյալ մանրամասն և օբյեկտիվորեն քննարկվում են Բանկի ներքին իրավական ակտերին և ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

96. Աշխատողները Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան իրավունք ունեն հաղորդել ՀՀ գործող օրենսդրության, Բանկի ներքին իրավական ակտերի և կազմակերպա-կարգադիր փաստաթղթերում առկա խախտումների մասին նրանց հայտնի փաստերի կամ հիմնավորված կասկածների վերաբերյալ, այդ թվում չարաշահումների, կոռուպցիայի, խարդախության և այլ գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են բերել նյութական վնասի կամ Բանկի գործնական հեղինակության կորստի, այդ թվում զանգահարելով «Խախտումների և չարաշահումների դեմ պայքարի թեժ գծին»՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ աշխատակիցների կողմից «Թեժ գծով» անհամապատասխանությունների և խախտումների վերաբերյալ հաղորդման ներկայացման կարգ»-ին համապատասխան: Յուրաքանչյուր առանձին դեպքում սույն Կոդեքսի պահանջների խախտման մասին գործը պետք է քննարկվի հաշվի առնելով բոլոր հանգամանքները: Սույն Կոդեքսի պահանջները խախտած աշխատողին պետք է հնարավորություն տրվի շարադրել տեղի ունեցած իրադարձությունների իր պատկերացումը մինչև նրա նկատմամբ ազդեցության միջոցներ կիրառելու մասին վերջնական որոշման ընդունումը:

97. Բանկը ապահովում է «Խախտումների և չարաշահումների դեմ պայքարի թեժ գծին» հաղորդագրություններ ուղարկած աշխատակիցների մասին տեղեկությունների գաղտնիությունը և պաշտպանությունը, ինչպես նաև երաշխավորում է ազդեցության միջոցների չկիրառումը այն աշխատակիցների հանդեպ, ովքեր բարեխիղճ կերպով հայտնել են Բանկի այլ աշխատակիցների կողմից կատարված խախտումների մասին:

ԳԼՈՒԽ 21. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

98. Սույն Կոդեքսն ենթակա է վերանայման ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ժամկետներում և կարգով:
99. Սույն Կոդեքսը կազմվել է հայերեն և ռուսերեն: Հայերեն և ռուսերեն տարբերակների միջև հակասությունների առկայության դեպքում, գործում է հայերեն տարբերակը: